

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

### *Տավրուսի միջնակարգ դպրոցի տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար*

ՀՀ Կառավարության 2010թ. մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի 6-րդ և 7-րդ կետերի համաձայն Սյունիքի մարզի <<Օլստարի միջնակարգ դպրոց>> և <<Տավրուսի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ների կոլեգիալ կառավարման մարմնի խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են
  - 1) ՀՀ քաղաքացիություն
  - 2) Ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):
2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝
  - 1) Դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով
  - 2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը
  - 3) Հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը
  - 4) Տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակով
  - 5) Ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացվեն բնօրինակների հետ:

Փաստաթղթերը ընդունվում են Սյունիքի մարզի <<Տավրուսի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում 2021թ. սեպտեմբերի 8-ից մինչև սեպտեմբերի 30-ը ներառյալ ամեն օր՝ ժամը 9<sup>00</sup>-ից մինչև ժամը 15<sup>30</sup>-ը, բացի հանգստյան (շաբաթ-կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2021թ. հոկտեմբերի 14-ին ժամը 13<sup>30</sup>-ին <<Տավրուսի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում :

Տեղեկությունների համար դիմել 098-186-100, 094-761-699 հեռախոսահամարներով կամ [tavrus@school.am](mailto:tavrus@school.am) հասցեով: